ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔԻ ՆԱՄԱԿՆԵՐ՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ապաքինման շրջանում Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինը շուտափույթ և կատարյալ ապաքինման մաղթանքներով նամակներ է ստացել Հայաստանի Հանրապետության Նախագահից, աշխարհի տարբեր հոգևոր պետերից:

Ուրբաթ, հոկտեմբերի 16-ի երեկոյան, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի հետ միասին այցելելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ՄԱԿ-ում ՀՀ լիազոր և մշտական ներկայացուցիչ Մովսես Աբելյանը Վեհափառ Հայրապետին է հանձնել Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանի նամակը: Հանրապետության Նախագահն իր լավագույն բարեմաղթանքներն է հայտնում Վեհափառ Հայրապետին և սպասում Նորին Սրբության վերադարձին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին:

«Այս պահին, երբ առավել ցայտուն է դարձել Եկեղեցու դերը հայոց պետականության ամրապնդման գործում, հատկապես կարևոր է, որպեսզի Դուք, Ձեր իմաստուն ղեկավարությամբ և համաժողովրդական հեղինակությամբ, նոր հոգևոր լիցք հաղորդեք հայ ժողովրդին», -ասվում է Ռ. Քոչարյանի նամակում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխան նամակով շնորհակալությունն է հայտնել Նախագահին նամակի համար՝ նշելով. «ինձի հոգեկան ուժի աղբյուր է այս օրերին՝ երբ Աստուծո կամքով վերադառնում եմ իմ առողջությունը»:

Վեհափառ Հայրապետը ողջույններ է հղել Հայաստանի Հանրապետության Նախագահին, Ազգային Ժողովին ու կառավարությանը՝ ավելացնելով. «Թող ապագայի օրերն ըլլան ավելի պայծառ, և հարատևում զարգացման ճամփով ընթանա մեր սիրեցյալ ժողովուրդը»:

Նամակն ավարտվում է հայրապետական ջերմ ողջույններով՝ ուղղված Հայաստանի, Արցախի և Սփյուռքի հավատավոր հոտին:

ԱԼԵՔՍԻ ԵՐԿՐՈՐԴԻ ՆԱՄԱԿԸ՝ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսին իր բարեմաղթանքն է հայտնել նաև Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք Ալեքսի Երկրորդը:

«Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Իմացա կատարված վիրահատության մասին և ուրախ եմ, որ բարեհաջող է ընթացել:

Թող որ Աստված շնորհի Ձեզ ուժ ու կարողություն՝ հաղթահարելու հիվանդության տրտմությունը:

Ես միշտ ջերմությամբ եմ հիշում մեր հանդիպումները և հուսով եմ, որ ապագայում նոր հանդիպումներ կլինեն: Ձերդ Սրբության զուտ մարդկային ջերմությունը և իմաստությունը, որպես Եկեղեցու պետ, ենցուկ են շատերին Հայաստանում, հայկական Սփյուռքում, Ռուսաստանում, Եվրասիայում և ամբողջ աշխարհում:

Թող որ Աստծո ողորմածությունը պահպանի Ձեզ:

Եղբայրական սիրով ողջագուրում եմ Ձերդ Սրբությանը», - ասվում է Համայն Ռուսիո Պատրիարքի նամակում: